# Մեր հոգին անգին է

Մեկն ասել է. «Բացարձակապես անհավատալի ու մարդկային հասկացողությունից վեր է այն հավատը, թե կա Աստված, ով ստեղծել է մարդուն և յուրաքանչյուրին տվել է հավիտենական հոգի, որը հավիտյան ապրում է կա՛մ Աստծո ներկայության մեջ, կա՛մ Նրանից զատված՝ հավիտենական տառապանքի մեջ»:

Իրոք, այսպիսի հավատը մարդու համար անտրամաբանական է և զուրկ բանականությունից: Ահա թե ինչ է ասում Աստվածաշունչը:

Աստվածաշունչը հստակորեն ասում է, որ Աստված ստեղծել է մեզ Իր պատկերով:

«*Եվ Աստված ասաց. «Մեր պատկերով և նմանության պես մարդ շինենք...: Աստված Իր պատկերով ստեղծեց մարդուն, Աստծո պատկերով ստեղծեց նրան, արու և էգ ստեղծեց նրանց» (Ծննդոց 1.26-27):*

Հիսուսը վճարեց մեր փրկության գինը:

«*Որովհետև ամենքը մեղանչեցին և Աստծո Փառքից պակասեցին: Բայց Նրա շնորհով և Հիսուս Քրիստոսով ձրի արդարանում ենք» (Հռոմեացիներին 3.23-24):*

Հարց է ծագում. «Ի վերջո ո՞վ ենք մենք, որ Աստված այդքան հոգ է տանում մեր մասին»:

Սաղմոսերգուն նույն հարցն է տալիս. «*Երբ որ տեսնում եմ երկինքը, քո մատների գործը՝ լուսինն ու աստղերը, որ Դու հաստատեցիր, ի՞նչ է մարդը, որ Դու հիշում ես նրան, և մարդու որդուն, որ Դու խնամք ես տանում նրա համար» (Սաղմոս 8.3-4):*

Երբ այս ամենին նայում ենք Քրիստոսի աչքերով, պարզ է դառնում, որ թեև մեղավոր ենք, բայց Նա, այնուամենայնիվ, արժևորում է մեզ: Մեր արժեքը Աստծուց է բխում: Մենք ինքնին ոչինչ չունենք, որ կարողանանք փոխհատուցել մեր փրկության և Աստծո սիրո դիմաց: Նա հոգ է տանում մեր մասին, քանզի Նրա պատկերով ենք ստեղծված, ու Նրա շունչն է մեր մեջ: Աստված ապացուցեց Իր սերը, երբ Իր միակ Որդուն տվեց, որպեսզի ով Նրան հավատա, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա:

Այո՛, անհավատի համար սա, թերևս, անմտություն կամ անհեթեթություն է, բայց Աստված գիտի յուրաքանչյուր հոգու արժեքը. դրա վառ ապացույցը խաչն է:

Պողոս առաքյալը գրում է Կորնթոսի հավատացյալներին. «*Որովհետև խաչի պատգամը կորածների համար հիմարություն է, բայց մեզ՝ փրկվածներիս համար, Աստծո Զորությունն է» (Ա Կորնթացիներին 1.18):*

Քո հոգին անգին է: Պարզապես հիշի՛ր, թե Հիսուսն ի՛նչ վճարեց այն փրկագնելու համար: